



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ N° 08-Ն

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի «ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ԵՎ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 03-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետով, «Դատական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2009 թվականի մարտի 20-ի «Դատական ծառայության պաշտոնների անվանացանկը և հաստիքների քանակը հաստատելու մասին» թիվ 03-Ն որոշման հավելվածում /այսուհետ՝ հավելված/ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1. Հավելվածի 18-րդ կետի «Հաստիքների քանակ» սյունակի «4» թիվը փոխարինել «7» թվով.

1.2. Հավելվածի 29-րդ և 30-րդ կետերի «Հաստիքների քանակ» սյունակի «10» թվերը փոխարինել «12» թվերով.

1.3. Հավելվածի «Ընդամենը» տողի «Հաստիքների քանակը» սյունակի «67» թիվը փոխարինել «74» թվով:

**ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ԱՎԱԳՅԱՆ**